

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 19/2

15 ապրիլի 2014 թ.

Քննարկվեց «Սեփ Տրանս» ՍՊԸ գանգատող ՀՀ ԿԱ ՊԵԿ Գյումրու ՏՀՏ 11.03.2014 թ-ի թիվ 2123673 ստուգման ակտի դեմ:

«Սեփ Տրանս» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

ՀՀ ԿԱ ՊԵԿ Գյումրու ՏՀՏ պետի 20 փետրվարի 2014 թ-ի թիվ 2123673 հանձնարարագրի «Սեփ Տրանս» ՍՊԸ-ում հանձնարարվել է իրականացնել ստուգում, սակայն.

1. Հարկային տեսուչների կողմից առանց տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ փոխարինող պաշտոնատար անձին հրամանի կամ հանձնարարագրի երկու օրինակը, ստուգումն սկսելուց առնվազն 3 աշխատանքային օր առաջ պատշաճ ձևով (առձեռն կամ փոստով) ներկայացնելու, խախտելով «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3 հոդվածի պահանջները, առանց ընկերության մասնակցության «Սեփ Տրանս» ՍՊԸ-ում իրականացրել են արտոնագրային վճարով հարկվող հանրային սննդի գործունեության ստուգում:

2. 15.03.2014 թ-ին կազմված ակտում նշվում է, որ «Սեփ Տրանս» ՍՊԸ-ի կողմից 2013 թ-ի հուլիս ամսվա համար հարկային տեսչություն չի ներկայացվել արտոնագրային վճար վճարող համարվելու մասին դիմում-հայտարարությունը, որով խախտվել է «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի պահանջները և «Սեփ Տրանս» ՍՊԸ-ից ենթակա է գանձման տուգանք՝ 765.000 դրամ: Այդ մասին ընկերությունը տեղեկացել է 25.02.2014 թ-ին կազմված ակտի նախագիծը ստանալուց հետո:

Միաժամանակ, ստուգման ակտի նախագծը կազմելուց հետո երկու օր անց՝ 27.02.2014 թ-ին, հարկային տեսուչների կողմից կազմվել է արձանագրություն, որում նշվում է «Սեփ Տրանս» ՍՊԸ-ի տնօրենի կողմից ստուգման հանձնարարագիրը ստորագրելուց հրաժարվելու մասին, ինչն իրականությանը չի համապատասխանում: Նշված հանգամանքը վկայում է, որ ստուգում իրականացնելու նպատակով հարկային տեսուչները մինչև ստուգումների անցկացումն նախապես մտադրված են եղել ընկերության տնօրենի նկատմամբ ստեղծել տարածայնություններ վարչական տուգանք նշանակելու համար: Դա է վկայում Գյումրու ՏՀՏ կողմից նախօրոք կազմված 25.02.2014 թ-ի ակտի և 27.02.2014 թ-ին հարկային տեսուչների կողմից կազմված արձանագրության ժամանակագրական տարբերությունը:

Միաժամանակ վարչական գործի միակողմանի ուսումնասիրության հետևանքով ուսումնասիրվել է բացառապես վարչական մարմնի ներկայացուցիչների հայտարարությունը, որն է նշում չկա ընկերության առարկությունների մասին, առկա չէ տուգանք գրելու մասին որևէ արժանահավատ ապացույց՝ առկա չէ որևէ ապացույց «Սեփ Տրանս» ՍՊԸ-ի կողմից 2013 թ-ի հուլիս ամսում հանրային սննդի գործունեություն իրականացնելու վերաբերյալ:

«Սեփ Տրանս» ՍՊԸ-ին հարկային մարմնի կողմից արտոնագիր տրամադրվել է բոլոր ամիսների համար, բացառությամբ նշված հուլիս ամսվա համար, որն էլ իբր բացահայտվել է 2014 թ-ի փետրվար ամսում:

Հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի ա/ և բ/ կետերի պահանջները «Սեփ Տրանս» ՍՊԸ-ն խնդրում է չեղյալ համարել ՀՀ ԿԱ ՊԵԿ Գյումրու ՏՀՏ 11.03.2014 թ-ի թիվ 2123673 ստուգման ակտը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով «Սեփ Տրանս» ՍՊԸ ներկայացուցիչների և ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց բերված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները, եկավ եզրակացության, որ գանգատը հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ Գյումրու ՏՀՏ պետի 20.02.2014 թ-ի թիվ 2123673 հանձնարարագրի համաձայն «Սեփ Տրանս» ՍՊԸ-ում իրականացվել է օրենքով սահմանված ելակետային տվյալների և գործակիցների ճշտության ստուգում, որն ընդգրկել է 01.04.2012 թ-ից մինչև 25.02.2014 թ-ն ընկած ժամանակաշրջանը: Արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Գյումրու ՏՀՏ 11.03.2014 թ-ի թիվ 2123673 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 765.000 դրամ:

Ստուգման ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ «Սեփ Տրանս» ՍՊԸ-ն ք.Մարալիկ, Նոր թաղամաս 15/1 հասցեում իրականացնում է արտոնագրային վճարով հարկվող հանրային սննդի գործունեություն: Նշված գործունեության մասով հարկ վճարողը 2013 թ-ի հուլիս ամսի համար հարկային տեսչություն չի ներկայացրել արտոնագրային վճար վճարող համարվելու սահմանված դիմում-հայտարարությունը:

Խախտվել է «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջները: Համաձայն «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի, առանց արտոնագրի սույն օրենքի թիվ 7 հավելվածում նշված գործունեության տեսակով /հանրային սնունդ/ զբաղվելու դեպքում «Սեփ Տրանս» ՍՊԸ-ից գանձվում է տուգանք՝ առանց արտոնագրի փաստացի գործունեություն իրականացնելու ժամանակահատվածի համար /2013 թ-ի հալիս ամիս/ վճարման ենթակա արտոնագրային վճարի կրկնակի չափով /բայց ոչ պակաս երեք ամսվա/ $127500 \times 2 \times 3 = 765.000$ դրամ: Ընդամենը ենթակա է վճարման բյուջե՝ 765.000 դրամ տուգանք:

Գանգատում նշված այն պնդման վերաբերյալ, որ ընկերության տնօրենին «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3 հոդվածով սահմանված կարգով չի ներկայացվել ստուգման հանձնարարագիրը, նշվեց հետևյալը:

Ստուգումն իրականացրած պաշտոնատար անձինք նշեցին, որ 21.02.2014 թ-ին այցելել են «Սեփ Տրանս» ՍՊԸ ՀՀ ԿԱ ՊԵԿ Գյումրու ՏՀՏ պետի 20.02.2014 թ-ի թիվ 2123673 հանձնարարագիրը սահմանված կարգով ընկերության տնօրենին ներկայացնելու համար: «Սեփ Տրանս» ՍՊԸ հաշվապահ Էդգար Բրույանը հայտնել է, որ ընկերության տնօրենը բացակայում է հանրապետությունից:

Ստուգող անձինք առաջարկել են հայտնել, թե ով է հանդիսանում ընկերության տնօրենին փոխարինող պաշտոնատար անձը, որպեսզի վերջինիս ներկայացնեն հանձնարարագիրը, սակայն ընկերության հաշվապահը նշել է, որ նման լիազորությամբ ընկերության որևէ աշխատակից օժտված չէ: Հաշվի առնելով այդ հանգամանքը, ընկերության հաշվապահին առաջարկվել է ծանոթանալ հանձնարարագրին և ստանալ դրա մեկ օրինակը, սակայն վերջինս հրաժարվել է: Այդ մասին 21.02.2014 թ-ին կազմվել է համապատասխան արձանագրություն:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, հրամանի կամ հանձնարարագրի երկու օրինակը պատշաճ ձևով (առձեռն կամ փոստով) ներկայացվում է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին, ... »:

Հանձնաժողովը գտնում է, որ նշված իրավանորմից հետևում է, որ տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի բացակայության պայմաններում պետք է նշանակված լինի նրան

փոխարինող պաշտոնատար անձ, ինչը քննարկվող դեպքում չի արվել: Արդյունքում հանձնարարագրի օրինակն ընկերությանը ուղարկվել է փոստով:

Քննարկման ընթացքում ստուգումն իրականացրած պաշտոնատար անձինք նշեցին, որ «Սեփ Տրանս» ՍՊԸ կողմից 2013 թ-ի հուլիս ամսում իրականացրել է արտոնագրային վճարով հարկվող հանրային սննդի գործունեություն, սակայն նշված ամսվա համար հարկային տեսչություն չի ներկայացրել արտոնագրային վճար վճարող համարվելու սահմանված դիմում-հայտարարությունը:

Ընկերության ներկայացուցիչների պնդումների վերաբերյալ, որ տեղի ունեցած վթարի հետևանքով 2013 թ-ի հուլիս ամսում հանրային սննդի գործունեություն չի իրականացվել, ստուգումն իրականացրած անձինք նշեցին, որ դրանք չեն համապատասխանում իրականությանը: Մասնավորապես, ընկերության կողմից 2013 թ-ի հուլիս ամսվա համար հարկային տեսչություն ներկայացվել է տեղեկություն հսկիչ-դրամակղային մեքենայով իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի վերաբերյալ, ըստ որի, հսկիչ-դրամակղային մեքենայով իրականացված դրամական հաշվարկների հանրագումարը կազմում է 47.200 դրամ: Բերված ապացույցը հիմնավորում է ընկերության կողմից 2013 թ-ի հուլիս ամսում հանրային սննդի գործունեություն իրականացվելու փաստը:

Վերոգրյալի կապակցությամբ Ընկերության ներկայացուցիչները նշեցին, որ այդ ժամանակահատվածում ընկերության կողմից իրականացվել է նաև հյուրանոցային գործունեություն և նշված 47.200 դրամի շրջանառությունը գոյացել է հենց հյուրանոցային գործունեության կազմակերպման արդյունքում:

Ստուգումն իրականացրած պաշտոնատար անձինք նշեցին, որ ընկերության կողմից շրջանառության հարկի հաշվարկ ներկայացվել է միայն 2013 թ-ի 4-րդ եռամսյակի համար և փաստացի հյուրանոցային գործունեության կազմակերպմամբ ընկերությունը սկսել է զբաղվել 2013 թ-ի սեպտեմբեր ամսից: Հետևաբար, 2013 թ-ի հուլիս ամսվա համար հայտարարված 47.200 դրամի շրջանառությունը չի կարող վերագրվել հյուրանոցային գործունեությանը:

Հանձնաժողովի 01.04.2014 թ-ի նիստի քննարկման արդյունքում սույն գործի վերաբերյալ ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն ստուգման ակտը թողնվել է անփոփոխ:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի «Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին» N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, սույն գործի վերաբերյալ Հանձնաժողովի կողմից ընդունված որոշման նախագիծը և առնչվող նյութերը (գանգատի փաթեթը) ուղարկվել են վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ (այսուհետ՝ Գանգատարկման խորհուրդ):

Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է դրական եզրակացություն:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

Ստուգման ակտը թողնել անփոփոխ:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում անհետաձևվարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ